ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«06» ապրիլ 2022թ.

ք. Երևան, Ս. Դավթի 87Ա

ՈՐՈՇՈՒՄ N 3027-1-Ա
ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ Զավեն Մկրտչյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ N33872/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության՝ ֆիզիկական անձ Զավեն Մկրտչյանի (ՀՎՀՀ՝ 49745014, ՀԾՀ՝ 2909590100, հասցե՝ Արմավիր, Շահումյան, Լ.Նավասարդյան փ., 43 տ.) չկատարված հարկային պարտավորությունը 24.08.2021թ. դրությամբ կազմել է 108,781 դրամ, որից հարկ՝ 103,371, տույժ՝ 5,410 դրամ, որը հաշվարկվել է ֆիզիկական անձի կողմից Երևան, Նոր-Նորքի 7-րդ միկրոշրջան, 10 շենք, 32 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը 27.12.2019թ-ից անորոշ ժամկետով ամսական 85,000 ՀՀ դրամ պայմանագրային արժեքով վարձակալության տրամադրելու արդյունքում ՝ ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 150-րդ հոդվածի 7-րդ կետի սահմանված կարգով:

Վերոնշյալ պարտավորությունը գանձելու վերաբերյալ 20.10.2021 թվականին կայացվել է թիվ 3027-Ա որոշումը:

Հաշվի առնելով 30.03.2022 թվականի ՀՏՌՎ վարչությունից ստացված թիվ Ն/71-4/53577-2022 գրությունն առ այն, որ Զավեն Սուրենի Մկրտչյանի վերաբերյալ ՀՀ կադաստրի կոմիտե կատարված հարցման արդյունքում պարզվել է, որ վերջինս չի հանդիսանում Երևան, Նոր-Նորքի 7-րդ միկրոշրջան, 10 շենք, 32 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականատեր, ուստի առկա են բավարար հիմքեր թիվ N33872/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության հիման վրա կայացված թիվ 3027-Ա որոշումն անվավեր ճանաչելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 65-րդ հոդվածով՝

ՈՐՈՇԵՑԻ

Ֆիզիկական անձ Զավեն Մկրտչյանի վերաբերյալ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 20.10.2021 թ. կայացված թիվ 3027-Ա որոշումը ճանաչել անվավեր:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **ԱՐՄԱՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Կատարող՝
Իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժին
Սեդա Ասատրյան
հեռ.՝ 010-309-191 (9165)